

ՀՈՒՆԻՍԻ 15-ԻՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՆՅԿԱՅՎԵՆ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻՔԱՇՎԻԼԻ. «ՀՆԱՐԱՎՈՐ ԱՄԵՆ ԻՆՉ ԿԱՆԵՆՔ, ՈՐ ԲՈԼՈՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒՆԵՆԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հրապարակել է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների նշանակման մասին հրամանագիրը: Նորմատիվային ակտը ապրիլի 14-ին հաստատվեց կառավարության կողմից: Տեղական ընտրությունների անցկացման ավելի վաղ նշված ամսաթիվը՝ հունիսի 15-ը, չի փոխվել: Այս տարի Վրաստանի տարբեր տարածաշրջանների 12 խոշոր քաղաքի քաղաքապետների, վարչակազմների եւ ինքնակառավարման մարմինների ղեկավարների ընտրությունները տեղի են ունենալու ուղղակի քվեարկության ճանապարհով: Մինչ այդ, ուղղակի քվեարկությամբ ընտրվում էր միայն Թբիլիսիի քաղաքապետը:



Ապրիլի 14-ին, կառավարության հերթական նիստում, վարչապետ Իրակլի Գարբաշվիլին համոզեց եկավ երկրում նախընտրական քարոզարշավում ներգրավված անձանց դեմ իրավական ընթացակարգերի մորատորիում հայտարարելու նախաձեռնությամբ: Ինչպես նշեց վարչապետը, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունը պետք է դառնա վարական ուղիով ընթացող քաղաքական քիմի կողմից, որը ազատ է արդարացի ընտրությունների երաշխիքն է: «Մենք հնարավոր ամեն ինչ կանենք, որպեսզի բոլոր կուսակցություններն ունենան լիարժեք քարոզարշավ անցկացնելու հնարավորություն:


այն բանի ցուցադրումը, որ Վրաստանում տեղի են ունեցել իրատեսական փոփոխություններ, եւ երկիրը կառավարվում է ժողովրդավարական ուղիով ընթացող քաղաքական քիմի կողմից, որը ազատ է արդարացի ընտրությունների երաշխիքն է: «Մենք հնարավոր ամեն ինչ կանենք, որպեսզի բոլոր կուսակցություններն ունենան լիարժեք քարոզարշավ անցկացնելու հնարավորություն:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԺԱՍԿԵՏՆԵՐԸ ԵՎ ԸՆԹԱՅԱՎԱՐՁԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, ընթացիկ տարվա հունիսի 15-ին անցկացվելու են տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները:

Ընդհանուր առմամբ, Վրաստանի մասշտաբով ամենիջական ընտրակարգով, ընտրվելու են տեղական 71 սակրեբուլոյի 2088 անդամները, ինքնակառավարման երկու քաղաքների քաղաքապետները եւ վարչության 59 նախագահները:



(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԵՎ ՈՉ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՌՈՒՅԻՉՆԵՐԻ ՀԵՏ



Ապրիլի 15-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին նախագահական նստավայրում հանդիպում ունեցավ անվտանգության եւ արտաքին քաղաքականության հարցերով զբաղվող ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչների եւ փորձագետների հետ:

Ված իրավիճակի եւ արտաքին մարտահրավերների առնչվող հարցեր, առնչվեցին ինչպես ռազմական, այնպես էլ տեղեկատվական անվտանգության հարցերին: Հանդիպման զլխավոր թեմաներից մեկը աշնանը Մեծ Բրիտանիայում նախատեսված ՆԱՏՕ-ի զագաթաժողովը եւ Հյուսիսատլանտյան պայմանագրի Վրաստանի անդամակցության հեռանկարներն էին:

Հանդիպմանը քննարկվեցին երկրում ստեղծված ռիսկերը:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԱՍՈՑԻԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՏՈՐԱԳՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԷՆ

Ապրիլի 14-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Գարբաշվիլին հանդիպում է ունեցել Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչների հետ: Աշխատանքային ճաշին ներկա էին եվրամիության անդամ երկրների դեսպանները եւ ԱՄՆ դեսպանի պաշտոնակատարը:

Քննարկման հիմնական թեման առնչվում էր բարձրակարգ պաշտոնյաների Վրաստան կատարելիք այցերի, Եվրամիության հետ ասոցիացման պայմանագրի ստորագրմանը եւ տեղական ինքնակառավարման ընտրություններին:

Գեոպոլիտիկայի արտաքին գործերի նախարարները, ապա ծրագրված են Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդի եւ Եվրախորհրդի նախագահ Հերման Կան Ռոմպեյի այցերը:

Նշենք, որ հաջորդ շաբաթ Վրաստան են այցելելու Ֆրանսիայի ստորագրմանը եւ տեղական ինքնակառավարման ընտրություններին:

ԱՊՐԻԼԻ 20-ԻՆ ՍՈՒՐԲ ԶԱՏԻԿ Է

ՔՐԻՍՏՈՍ ՀԱՐՅԱՎ Ի ՄԵՌԵԼՈՑ. ՕՐՀՆՅԱԼ Է ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ ՉԵՂ ԵՎ ՄԵՂ ՄԵԾ ԱՎԵՏԻՍ...

Հիսուսի Հարությունը մարկության պատմության մեծագույն հրաշքն է, որի ամուր հիմքերի վրա է խարսխված քրիստոնեական հավատը: Հիսուս քարոզեց սեր, զուբ, արդարություն ու խաղաղություն Մույնիսկ չարականների համար: Նա խաչվեց հանուն մարդկության, բայց ներքեց նրանց, զթաց ու աղոթեց բոլորի համար: Սուրբ Հարության տոնը կոչվում է Մաե. «Ձատիկ»: Ձատիկ նշանակում է զատում, հեռացում մեղքից եւ մերժեցում Աստծուն:



Հայերիս համար Ձատիկը խորհրդանշում է Մաե. հավատքի հաղթանակը, ինչպես եւ ազգի հարությունն ու վերանորոգությունը: Իբրեւ առաջիններից մեկը քրիստոնյա ազգերի մեջ՝ հայը հավատաց Աստվածորդու Հարության ավետիսին, որովհետեւ իր կյանքի տառայալ պատկերը տեսավ իր Տիրոջ՝ Քրիստոսի երկրավոր կյանքի մեջ եւ իր հաղթանակը՝ Քրիստոսի Հարության մեջ: Եվ այսօր, Քրիստոնյա մյուս ժողովուրդների հետ միասին, մա էլ է ավետում. «Քրիստոս յարեալ է մեռելոց. օրհնյալ է Յարութիւնը Քրիստոսի»:

ԱՊՐԻԼԻ 24-ԻՆ ԼՐԱՆՈՒՄ Է ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 99-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ

2014 թվականի ապրիլի 21-ին ժամը 12.00-ին Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցու բակում կանցկացվի այդտեղ տեղադրված Հայոց Ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված խաչքարի օծման արարողությունը, իսկ ժամը 14.00-ին Թբիլիսիի «Քորթիարդ Մարիոտ» հյուրանոցի դահլիճում կկայանա Երեւանի «Ձանգակ» համույթի դասական երաժշտության համերգը:



Ապրիլի 22-ին ժամը 18.00-ին Թբիլիսիում, Վրաստանի խորհրդարանի Ազգային գրադարանում կկայանա Ծերուն Թորոպյանի «Պատմվածքներ» գրքի շնորհանդեսը նվիրված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին: Ապրիլի 24-ին ժամը 12.00-ին Սուրբ Էջմիածին եկեղեցում Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանը կմատուցի սգո պատարագ նվիրված Մեծ եղեռնի անմեղ զոհերի հիշատակին: Ապրիլի 29-ին ժամը 19.00-ին Թբիլիսիի Ալ.Գրիբոյեդովի անվան ռուսական դրամատիկական թատրոնում կկայանա Պարույր Սեւակի «Անլռելի զանգակատուն» ներկայացումը ի հիշատակ ցեղասպանության զոհերին:

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀՈՎԻԿ ԱՐԱՀԱՄՅԱՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ

Ինչպես արդեն հաղորդել ենք, ապրիլի 3-ին Տիգրան Մարգարյանը ներկայացրել էր Հայաստանի վարչապետի պաշտոնից հրաժարականի դիմում: Ապրիլի 13-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը ստորագրեց Հովիկ Արահամյանին Հայաստանի վարչապետ նշանակելու մասին հրամանագիրը: Իսկ հաջորդ օրը՝ ապրիլի 14-ին, նախագահը կառավարության անդամներին ներկայացրեց Հայաստանի նորանշանակ վարչապետին:



Հովիկ Արգամի Արահամյանը 56 տարեկան է: Ավարտել է Երեւանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը: Եղել է նորանկախ Հայաստանի Ազգային ժողովի առաջին գումարման պատգամավոր: Վերջին քսան տարիների ընթացքում աշխատել է որպես Հայաստանի Արարատի մարզի մարզպետ, Հայաստանի տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախարար, փոխվարչապետ: 2008 թվականին զբաղեցրել է Հայաստանի նախագահի աշխատակազմի ղեկավարի պաշտոնը: Նույն թվականին ընտրվել է Հայաստանի Ազգային ժողովի պատգամավոր, ապա՝ ԱԺ նախագահ: Ամուսնացած է, ունի երեք զավակ եւ հինգ թոռնիկ:

ՆՇԱՆԱԿՈՒՄ

ՎԱՐՉԱՊԵՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՆՈՐ ՆԱԽԱՐԱՐԻՆ



Վարչապետի խոսքերով, նա ունի համապատասխան բարձր մակարդակի կրթու-

Ապրիլի 14-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին կառավարական գրասենյակում անցկացված մամուլի ասուլիսում, Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցվածքի նախարարի պաշտոնում ներկայացրեց էլզուջա խոկրիաշվիլու թեկնածությունը:

թյուն եւ երկար տարիներ աշխատել է որպես մանկավարժ: «Ներկա դրությամբ, նա աշխատում է մունիցիպալային զարգացման հիմնադրամի ղեկավար, նաեւ գլխավորում է Կովկասյան ինստիտուտի վարչությունը: Հուսով եմք, որ էլզուջա խոկրիաշ-

վիլին արժանվույն տեղ կգրավի մեր թիմում եւ կլինի առաջատար նախարարներից մեկը»,- հայտարարեց վարչապետը: Նա տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցվածքի հին եւ նոր նախարարներին Դավիթ Նարմանիային եւ էլզուջա խոկրիաշվիլուն մաղթեց հաջողություններ:

ԿՐԹԱԿԱՆ

ԳՈՐԾՈՒՄ Է ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ

Զուրաբ ժվանիայի անվան պետական վարչարարության դպրոցը նորացնում է ազգային փոքրամասնություններով հոծաբնակ տարածաշրջաններում աշխատող հանրային ծառայողների պետական լեզվի ուսուցման ծրագիրը:

Ապրիլի 15-ին Վրաստանի կրթության փոխնախարար Գիորգի Շարբաշիձեն, տեղական իշխանության ներկայացուցիչների հետ, Դնանիսիում բացեց տեղի վերանորոգված ուսումնական կենտրոնը: Պետական վարչարարության միասնական տարածքում ինտեգրման աջակցության նախագծի շրջանակներում, Դնանիսիի տեղական իշխանության մարմիններում եւ կենտրոնական կառույցների տեղական ներկայացուցչություններում աշխատանքի ընդունված ազգային փոքրամասնությունների 70 ներկայացուցիչ տեղի կենտրոնում կանցնի պետական լեզվի եռամսյա բազիսային դասընթաց, որի ավարտից հետո, շրջանավարտներին կտր-

վեն հավաստագրեր, եւ նրանք կկարողանան Քութայիսիում Զուրաբ ժվանիայի անվան վարչարարության դպրոցում անցնել ուսուցման ողջ դասընթացը: Դնանիսիի գույքընթաց, վարչարարության դպրոցները ուսուցում են անցկացնում նաեւ Ախալքալաքիում, Նինոծմինդայում, Ծալկայում, Բոլնիսիում, Մառնեուլիում, Գարդաբանիում եւ Սազարեջոյում: 2014 թվականին դպրոցը ծրագրում է պետական կառույցներում աշխատանքի համար վերապատրաստել ազգային փոքրամասնությունների 2 հազար ներկայացուցիչ:

ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Հաջորդ շաբաթ մեկնարկում է առաջին դասարանցիների գրանցումը: Ինչպես հայտարարեց Վրաստանի կրթության եւ գիտության փոխնախարար Լիա Գիգաուրին, 2014-2015 ուստարիների համար առաջին դասարանցիների գրանցումը կանցկացվի երեք փուլով:

Վրաստանի կրթության նախարարության տեղեկատվությամբ, գրանցման առաջին փուլը կմեկնարկի ապրիլի 23-ին եւ կավարտվի մայիսի 2-ին: Կգրանցվեն այն առաջին դասարանցիները, ում թույլ-եղբայրները սովորում են այդ դպրոցում, ում ծնողները այդ դպրոցի աշխատակիցներ են, այն ընտանիքները, որոնց երկու կամ ավելի երեխա միաժամանակ այդ դպրոց է գնալու: Գրանցման առաջին փուլում փաստաթղթերի ընդունումը կիրականացվի մայիսի 5-ից 15-ը ներառյալ: Գրանցման երկրորդ օնլայն գրանցումը, կսկսվի մայիսի 20-ին եւ կավարտվի հունիսի 20-ին: Այդ փուլում կգրանցվեն այն առաջին դասարանցիները, ովքեր առաջին փուլում չեն գրանցվել: Այդ փուլում փաստաթղթերի ընդունումը կսկսվի հունիսի 23-ին եւ կավարտվի հունիսի 4-ին: Գրանցման երրորդ փուլը կսկսվի հունիսի 10-ին եւ կավարտվի հունիսի 18-ին: 2014-2015 ուստարվա տարրական դասարաններում սովորելու իրավունք է վերապահվում այն անձանց, ում վեց տարին լրանում է մինչեւ 2015 թվականի հունվարի մեկին, կամ ով 2013-2014 թվականներին սովորել է հանրակրթական տարրական նախապատրաստական դասարանում, եւ մինչեւ 2014-2015 թվականի ուստարվա սկիզբը լրացել է նրա 5 տարին: Առաջին դասարանցիների գրանցումը կարող է իրականացվել Օնլայն պայմանակարգով. www.registration.emis.ge կայքում ծնողները լրացնում են դիմում, իսկ գրանցումից հետո, փաստաթղթերը ներկայացնում են այն դպրոց, որն ընտրում

են: Մասնավորապես, փաստաթղթերի թվում պետք է ներկայացնեն երեխայի ծննդյան վկայականը, նոտարի կողմից հաստատված ծննդյան վկայականի պատճենը, տեղեկանք առողջության մասին, 3x4 չափի երկու լուսանկար, ծնողների անձնական վկայականի պատճենը, սոցիալական անպաշտպանության մասին փաստաթուղթ, փախստականի վկայականը:



Լիա Գիգաուրինը, Վրաստանի կրթության եւ գիտության փոխնախարարը, հայտարարեց 2014-2015 ուստարիների համար առաջին դասարանցիների գրանցման մասին:

ՆՈՐ ՏԵՍԱԿԻ ԲՈՒՔԵՐ՝ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐԻՆ

2014-2015 ուստարվա առաջին դասարանցիները կստանան նոր տեսակի բուքեր:

Ինչպես տեղեկացրեց Վրաստանի կրթության եւ գիտության փոխնախարար Լիա Գիգաուրին, նոր բուքերը բարելավվել են ինչպես տեքստային պարամետրերով, այնպես

էլ՝ բովանդակությամբ: Ներկա դրությամբ, գերատեսչությունը աշխատում է պիլոտային նախագծի մշակման ուղղությամբ: «Նախարարությունը աշխատել է աշխատում է նոր տեսակի համակարգիչների ուղղությամբ, որոնք կներկայացվեն աշակերտներին, եւ որոնք կլինեն բարձր դասի»,- հայտարարեց Լիա Գիգաուրին:

տեղ եւ աշխատում է նոր տեսակի համակարգիչների ուղղությամբ, որոնք կներկայացվեն աշակերտներին, եւ որոնք կլինեն բարձր դասի»,- հայտարարեց Լիա Գիգաուրին:

ԱՌՈՂՋԱՊԱՐՈՒԹՅՈՒՆ


680 ՀԱՉԱՐ ԲԱՂԱՔԱՅԻ ՏԵՂՅԱԿ ԶԷ, ՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ Է



Վրաստանում 490-ից մինչեւ 680 հազար քաղաքացի տեղյակ չէ, որ ապահովագրված է համընդհանուր ապահովագրության եւ պետական ապահովագրության ծրագրերով: Այդ մասին նշված է «Միջազգային թափանցիկություն-Վրաստան»-ի կողմից անցկացված ուսումնասիրությունների եզրակացության մեջ:

Կազմակերպությունները լայնամասշտաբ ուսումնասիրություններ անցկացրեցին առողջապահության եւ առողջապահության ապահովագրման հարցով բնակչության տրամադրվածության բացահայտման նպատակով: Հետազոտությունների արդյունքներում նշվում է, որ հարցման ենթարկված 1918 քաղաքացու 18 տոկոսը տեղյակ չէ, որ ապահովագրված է, 75 տոկոսը տեղյակ չէ, թե երբ կարող է համընդհանուր ապահովագրության ծրագրի շրջանակներում անվճար ստանալ դեղորայք: Հարցման ենթարկվածների 17 տոկոսը չի հավատում, որ, անհ-

որ երկրում է թողարկվում դեղորայքը: Դեղագործական ապրանքներ արտադրող երկրներից բոլորից շատ վատահուն են Ռուսաստանին, ապա՝ Եվրամիության երկրներին, չնայած, որ միջազգային չափորոշիչներով ռուսական դեղագործական արտադրությունը բազում հարցեր է առաջացնում: Ուսումնասիրությունների հեղինակ Միխեիլ Կուկավան դրական է գնահատում արդյունքներն այն կապակցությամբ, որ հարցման ենթարկվածների 47 տոկոսը պատրաստ է ապահովագրության համար անսակն վճարել 1-ից մինչեւ 30 եւ ավելի լարի, ինչը նշանակում է, որ Վրաստանում առավելագույն 1,6 միլիոն չափահաս քաղաքացիներ պատրաստ են կիսել առողջության ապահովագրության ֆինանսական ծախսերը:



ՄԱԿ

ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՀԱՐՑՈՒՄ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅԱՆ ԶՂՍԱՄԱՆ

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի արտահերթ նիստի մասնակիցները ապրիլի լույս 14-ի գիշերը որեւիցե փոխընդունելի որոշման չեն հասել Ուկրաինայի իրադրության շուրջ: Նիստը հրավիրվել էր Ռուսաստանի նախաձեռնությամբ: Քննարկման արդյունքում որեւէ փաստաթուղթ չի ընդունվել:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒԿՐԱԻՆԱՅԻՆ

Եվրամիությունը վերջնականապես հաստատել է Ուկրաինային 1 մլրդ եվրո գումարի մակրոֆինանսական օգնություն հատկացնելու որոշումը:

Այդ որոշումը Եվրամիության արտաքին գործերի խորհուրդն ընդունել է ապրիլի 14-ին, Լյուքսեմբուրգում: Ուկրաինան եւ ԱՄՆ-ը համաձայնագիր են ստորագրել Կիեւին 1 մլրդ դոլարի ֆինանսական օգնության վերաբերյալ: Այդ մասին հայտնել է Ուկրաինայի վարչապետ Արսենի Յացենյուկը: Օգնության մեխանիզմը Ուկրաինայի պարտային պարտավորությունների գծով 1 մլրդ դոլարի երաշխիքների տրամադրումն է:

ՆԱՏՕ

ՈՒՇԵՂԱՑՎՈՒՄ ԵՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ՆԱՏՕ-ի խորհուրդը, Հյուսիսատլանտյան դաշինքի 28 անդամ երկրների դեսպանների մակարդակով Բրյուսելում կայացած նիստում, հավանություն է տվել Ուկրաինայի ճգնաժամի կապակցությամբ դաշինքի արեւելյան կողմից կատարվող օդային օգնության անվտանգության ուժեղացման միջոցառումների փաթեթին: Այդ մասին հայտնել է ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Անդերս ֆոգ Ռասմուսսենը: «Մեր պաշտպանական պլանները կվերանայվեն եւ կուժեղացվեն»,- ասաց նա:

ՀԱԿԱՎԱՐԵԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ

Գերագույն ռադան որոշում է ընդունել Ուկրաինայի արեւելքում հակահարկաբեկական գործողությանը հավանություն տալու մասին: Ուկրաինայի ներքին գործերի նախարար Արսեն Ավակովը Facebook-ում հայտնել է, որ ապրիլի լույս 17-ի գիշերը Դոնեցկի մարզի Մարիուպոլ քաղաքում Ազգային գվարդիայի զորամասի վրա կատարված հարձակմանն ի պատասխան իրականացված գործողության ընթացքում, նախնական տվյալներով, սպանվել է երեք, վիրավորվել 13 մարդ: Ձեռքբերվել է 63 հոգի: Հակահարկաբեկական գործողություններ են իրականացվում նաեւ Դոնեցկում, Լուգանսկում, Խարկովում, հարավարեւելյան Ուկրաինայի մյուս քաղաքներում:

ՀԱՅՏՆՎԵԼ Է ԵՐԿԻՍՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՍՈՒԹՅՈՒՆ

Ուկրաինայի կենտրոնական իշխանությունը պատրաստ է ոչ միայն երկխոսություն սկսել տարածաշրջանների հետ, այլեւ կատարել Ուկրաինայի յուրաքանչյուր քաղաքացու օրինական պահանջները, հայտարարել է վարչապետ Արսենի Յացենյուկը: Դոնեցկի մարզի վարչատնտեսական ակտիվի հետ կայացած հանդիպմանը: Վարչապետը նշել է սահմանադրական բարեփոխման անցկացման կարելիությունը, որի շրջանակներում, նրա խոսքով, կիրականացվի իշխանական լիազորությունների փոխանցումը տեղերին: Միաժամանակ, Յացենյուկն ասել է, թե Ուկրաինան «երբեք եւ ոչ մի պարագայում» չի սահմանափակի լեզուների գործածումը, որ լեզվով քաղաքացիներին հարմար է խոսել երկրում:

Շարաքից շարաք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒԽ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՎԵԼՈՒ ԵՆ ՀԱՆԳԻՍ ՄԹՆՈԼՈՐՏՈՒՄ

Ապրիլի 13-ին, խորհրդարանական մեծամասնության հետ կայացած հանդիպմանը, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին հայտարարեց, որ հունիսի 15-ի համար նշանակված տեղական ինքնակառավարման ընտրություններն անցկացվելու են հանգիստ, ժողովրդավարական եւ խաղաղ մթնոլորտում:




Կալածեն եւ խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին:

Հանդիպմանը կառավարող կուսակցությունը քննարկեց ընտրությունների նախապատրաստման ընթացքն ու օրինանախագծերը, որոնք ներկայացվելու են խորհրդարանի քննարկմանը:

տեղական ընտրությունները եվրոպական բարձր մակարդակով անցկացնելու է:

Հանդիպմանը, որն անցկացվեց «Վրացական երազանք» կուսակցության կենտրոնակայանում, ներկա էին փոխվարչապետ Կախա



ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՍԿՎԵՑԻՆ ԶԱՏԿԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐՆԵՐԸ

Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունը երկրի հանրային դպրոցներում ապրիլի 17-ից մինչև 23-ը հայտարարել է Ձատկական արձակուրդներ: Այդ օրերին չեն աշխատի նաև նախադպրոցական հաստատությունները:

ՈՍՏԻԿԱԼՈՒԹՅԱՆ ՕՐԸ ԿԼՇԿԻ ՄԱՅԻՍԻ 30-ԻՆ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգելաշվիլու հրամանագրով, անվավեր է հայտարարվել նախկին նախագահի մայիսի 6-ին ուստիկանության օր նշանակելու մասին հրամանագիրը: Վերոնշյալ հրամանագիրը ներկայումս առաքվել է նախարարների կաբինետի հաստատմանը: Միաժամանակ, նախարարները քննարկել են նաև 2013 թվականի կառավարության վերոնշյալ հարցին վերաբերող որոշման փոփոխությունը:

ԱՌԱՋԱԴՐՎԵՑ ՎԱՐԱՄԱՎԵՑ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՐԱՆՁ

Վրաստանի Լեյբորիստական կուսակցության նախագահ Շավա Նաթելաշվիլին հանդես է գալիս գործող խորհրդարանի ցրման եւ վաղաժամկետ խորհրդարանական ընտրությունների անցկացման պահանջով: Այդ նպատակով, Լեյբորիստներն սկսել են ստորագրահավաք:

ՎԵՐԱՀՅՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՎՈՒՄ Ե

Բնապահպանության վերահսկողության դեպարտամենտը խստացնում է անվադողերի այրման նկատմամբ վերահսկողությունը: Նախարարության տեղեկատվությամբ, Վրաստանում ավանդաբար անցկացվում է «Ծիակոկոնոբա» տոնը, որի ընթացքում, պարտադիր կարգով խարոյկ են վառում հաճախ օգտագործելով ավտոդողեր եւ պլաստիկ նյութեր: Դա քաղաքներում եւ երկրամասերում մթնոլորտային օդի աղտոտման գլխավոր հիմնախնդիրներից մեկն է: Այդ կապակցությամբ, վարչական իրավախախտումների օրենսգրքում բաց տեսքով ցանկացած մնացորդների այրումը տուգանվում է 400-ից մինչև 600 լարիի չափով:

ԱՆԿՆՈՐ ՏԵՎԱԿԱՆ ԺԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻՆ

Վրաստանի քրեա-կատարողական նախարար Սոգար Սուբարիի նախաձեռնությամբ, սոցիալապես անպաշտպան ընտանիքների բանտարկյալները, որոնք գրանցված են կամապատասխան բազայում, հետախույս կարող են օգտվել տեւական անվճար ժամադրության իրավունքից: Գործող օրենսդրության համաձայն, տեւական ժամադրությունները վճարովի են, եւ սակագինը կազմում է 60 լարի: Ելնելով նրանից, որ սոցիալապես անպաշտպան ընտանիքներից բանտարկյալների մեծամասնությունը չեն կարող վճարել այդ սակագինը, նախարարը հանդես եկավ վերոնշյալ նախաձեռնությամբ: Միաժամանակ, նախարարի կարգադրությամբ, անչափահաս բանտարկյալների համար տեւական ժամադրությունների սակագինը կրճատվել է մինչև 30 լարին:

ՄԵԾ ՍՊՈՐՏԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ԸՆԴՊՑՎԵՅ ԿԱՌՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Ապրիլի 15-ին, Վրաստանի սպորտի եւ երիտասարդության գործերով նախարարության նախաձեռնությամբ, անցկացվեց «Վրաստանի սպորտի պետական քաղաքականություն մարտահրավերներ եւ հեռանկարներ» մարզական թեմային նվիրված խորհրդածրողով, որի աշխատանքին մասնակցեց Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին:

Խորհրդածրողովում ընդունվեց հռչակագիր, որը ստորագրեցին երկրի վարչապետը, սպորտի եւ երիտասարդության գործերով նախարարը, Վրաստանի ազգային օլիմպիական կոմիտեի նախագահը: Հռչակագրի համաձայն, խորհրդածրողովի մասնակիցները պարտավորվում են ապահովել սոցիալական բոլոր խմբերի, սահմանափակ հնարավորություններով մարդկանց, առողջապահական, վերականգնման եւ մարզական սպասար-

կումները, նպաստել սպորտի պետական քաղաքականության զարգացմանը, այդ ոլորտում ներդնել եվրոպական չափորոշիչները: Կողմնակա մարզական կազմակերպությունների, մարզածեւերի ֆեդերացիաների եւ մարզակույմբների միջև սերտ համագործակցության հիմքերը:

Խորհրդածրողովի մասնակիցները ծրագրեցին նաև մարզական ռազմավարության աջակցությամբ ծրագրի մշակում:

ԳՈՐԾԱԴԻՐ



ՔՆՆԱՐԿՎԵՅ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵՓՈՒՄԱՆ ԸՆԹԱՅՔԸ

Վրաստանի կառավարությունը հաստատել է դատավարական համաձայնությունների բարեփոխումը: Ինչպես հայտարարեց Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին, բարեփոխումը նախատեսում է դատավարական համաձայնության ձեւակերպման բարեփոխումը:

լայնել տուժյալների իրավունքները: Նրանց կընձեռվի ձեւակերպման գործընթացին ներկա գտնվելու եւ իրենց կարծիքը հայտնելու իրավունք:

«Օրինանախագիծը նախատեսում է, որ դատախազության եւ մեղադրյալի միջև դատավարական համաձայնության մասին բանակցությունների ընթացքում, պետք է պարտադիր կարգով ձեւակերպվի համապատասխան ար-

ձանագրություն: Դա նորամուծություն է: Արձանագրությունում նշվելու է, թե կողմերը որ հարցերի շուրջ են հասել համաձայնության: Այն հաստատվելու է կողմերի ստորագրությամբ: Բացի այդ, երբ դատավարական համաձայնությունը հաստատման համար ներկայացնում է դատարանին, դատավորը պարտավոր է մեղադրյալին ներկայացնել համաձայնության ձեւակերպման

իրավական հետեւանքները, մասնավորապես այն, որ մեղադրյալը կհամարվի դատված եւ չի ունենա իր քրեական գործը ըստ էության քննարկելու հնարավորություն: Նաև մեծացվում են տուժյալների իրավունքները: Նրանք կարող են գտնվել դատարանի դահլիճում, արտահայտել իրենց կարծիքը կամ այն ներկայացնել գրավոր տեսքով»,- հայտարարեց Թեա Ծուլուկիանին:

ՀԱՍՏԱՏՎԵԼ ԵՄ ԱՐԿՈՒ ԻՐԱՎՈՒՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՈՒՋՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Վրաստանի կառավարությունը հաստատել է 2014-2020 թվականների համար մարդու իրավունքների ոլորտում առաջնահերթությունների սահմանման վերաբերյալ ազգային ռազմավարության փաստաթուղթը:

Ռազմավարությունը ներկայացրել է խորհրդարանի հաստատմանը, որից հետո կառավարությունը կսահմանի գործողությունների մանրամասն ծրագիրը: «Մանրամասն կներկայացնեն պետական տարբեր գերատեսչությունների կող-

մից այդ ուղղությամբ իրականացվող քայլերն այն հաշվով, որպեսզի տարբեր ոլորտներում մարդու իրավունքների պաշտպանությունը լինի ապահովված: Ռազմավարությունում տրված են ընդհանուր սկզբունքները, սակայն գործո-

ղության ծրագրում կներկայացվեն կոնկրետ քայլեր»,- հայտարարեց մարդու իրավունքների պաշտպանության հարցերով վարչապետի խորհրդական Թամար Չուգոշվիլին:

Նրա պարզաբանմամբ, պետական ողջ աշխատակազմը ստանձնել է պարտավորություն, թե ինչ է արվելու մարդու իրավունքների պաշտպանության ուղղությամբ:

ԻՐԱՎԱՊԱՅ

ՆԳ ՆԱԽԱՐԱՐԸ ՍԱՄՅԻՆԵ-ՉԱՎԱԽԵԹԻՈՒՄ

Վրաստանի ներքին գործերի նախարար Ալեքսանդր Ծիկաիձեն շրջայցով գտնվում էր Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանում:

ՆԳ նախարարը եղավ ոստիկանության տարածաշրջանային գլխավոր վարչությունում, Ախալքալաքի, Ախալցխեի, Նինոծմինդայի, Աղզիգենիի եւ Ասպինձայի մունիցիպալային վարչություններում: Ալեքսանդր Ծիկաիձեն ծանոթացավ աշխատակիցների, նրանց աշխատանքային պայմանների հետ, տեղեկատվություն ստացավ տարածաշր-

ջանում ստեղծված իրավիճակի մասին: Նախարարը դրական գնահատեց տարածաշրջանային ոստիկանության աշխատանքը: Նա նաև դիտեց Ասպինձայի համալիր բազայի շինարարությունը: Ինչպես նշվեց այցի ժամանակ, համալիրը պատրաստ կլինի մի քանի ամիս անց, եւ դրանում կտեղակայվեն ոստիկանական ստորաբաժանումներ:



ԱԽԱԼՑԻՆԵ. ԶԵՐԲԱՎԱԿԵԼ ԵՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՅՈՒՐԱՅՄԱՆ ՀԱՄԱՐ

Վրաստանի ֆինանսների նախարարության հետաքննչական ծառայության աշխատակիցները, պաշտոնական դիրքի շահարկման, ծառայական կեղծումների եւ բյուջետային միջոցների հափշտակման համար, ձերբակալեցին մի քանի պաշտոնյաների:

Ծառայության տեղեկատվությամբ, ձերբակալվել են Ախալցխեի մունիցիպալիտետի ենթակառույցների զարգացման

ծառայության մասնագետներ Ռեւազ Մերաբիշվիլին եւ Գիորգի Կասրաշվիլին, ինչպես նաև «Սամցխե XXI» ՍՊԸ-ի տնօ-

րեն Գուրամ Փարցախաշվիլին: Հետաքննությամբ պարզվել է, որ 2013 թվականի հունիսի 17-ին բնակելի տների կտրուրների վերանորոգման էլեկտրոնային մրցույթում հաղթել է «Սամցխե XXI» ՍՊԸ-ն: Մրցույթի պայմաններով, աշխատանքի որակին հետեւելու էին ենթակառույցների զար-

գացման ծառայության մասնագետներ Ռեւազ Մերաբիշվիլին եւ Գիորգի Կասրաշվիլին: Սակայն, վերոնշյալ անձինք ձեւակերպել են կեղծ արձանագրություններ եւ նշել, որ կատարվել է 54800 լարիի աշխատանք, թեպետ կատարված աշխատանքների իրական արժեքը կազմել է 33400 լարի:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ԸՆԹԱՅԱՎԱՐՔԸ

(Այկազը՝ 1-ին էջում)

Ճանաչողի կողմից հաստատված ընտրությունների անցկացման հիմնական ժամկետները եւ ընթացակարգերը:

Ապրիլի 14-ից, ընտրությունների օրվա պաշտոնական նշանակումից հետո, մեկնարկեց ընտրաքարտերի արտադրությունը: Ապրիլի 19-ին ԿԸԳ-ն հրապարակեց ընտրողների ընդհանուր եւ ըստ տարածաշրջանների թվաքանակը: Բացի այդ, ԿԸԳ-ն պարտավոր է ընտրական ցուցակների ճշտումներից հետո վերջնական տվյալները հրապարակել նաեւ հունիսի 10-ին:

Ապրիլի 19-ից մեկնարկում է կուսակցությունների եւ նախաձեռնող խմբերի գրանցման ընթացակարգը, իսկ ընտրական գրանցման մասին վերջնական որոշումն ընդունվելու է 10 օրվա ընթացքում:

Մայիսի 3-ին կմեկնարկի եւ մինչեւ մայիսի 9-ը կշարունակվի ընտրական դաշինքների գրանցումը:

Մայիսի 16-ին կուսակցությունները եւ դաշինքները ներկայացնելու եւ սակրեբուլյում ընտրվելիք թեկնածուների կուսակցական ցուցակները եւ մեծամասնական թեկնածուներին: Մեծամասնական թեկնածուների առաջադրման իրավունք է վերապահվում նաեւ նախաձեռնող խմբերին: Այդ օրը ավարտվում է կուսակցությունների եւ դաշինքների կողմից քաղաքապետների եւ վարչության նախագահների թեկնածուների առաջադրման ժամկետը:

Մայիսի 16-ին նաեւ կհստակեցվեն ընտրական քվեաթերթիկներում ընտրական սուբյեկտների համարները:

Մայիսի 22-ին ավարտվում է քաղաքապետների եւ վարչության նախագահների, իսկ մայիսի 23-ին՝ սակրեբուլյումների անդամների թեկնածուների գրանցումը:

Թեկնածուները ընտրություններից կարող են հրաժարվել մինչեւ հունիսի 5-ը: Եթե նրանք ինքնաբացարկ են հայտարարում ժամկետի սպառումից հետո, մինչեւ հունիսի 5, նրանց ազգանունը կնշվի քվեաթերթիկում:

Մինչեւ հունիսի 5-ը տեղական դիտորդական կազմակերպությունները պետք է դիմում ներկայացնեն ընտրական վարչությանը, իսկ դրանց գրանցման հարցը լուծվելու է դիմումի ներկայացումից 5 օրվա ընթացքում:

Հունիսի 8-ին սպառվում է ԿԸԳ-ի միջազգային դիտորդական կազմակերպությունների կողմից դիմում ներկայացնելու ժամկետը: Դրանց գրանցման հարցով վերջնական պատասխան ԿԸԳ-ն ներկայացնում է երկու օրվա ընթացքում: Հունիսի 13-ին ժամը 8:00-ից մինչեւ հունիսի 15-ի ժամը 8:00-ն, այսպիսով մինչեւ քվեարկության ավարտը քաղաքական վարկանիշերի հրապարակումն արգելվում է: Հունիսի 15-ին ընտրություններն օրը, տեղամասերում քվեարկությունը սկսվում է առավոտյան ժամը 8:00-ին եւ ավարտվում ժամը 20:00-ին: Դրանից հետո սկսվում է ձայների հաշվարկման ընթացակարգը: Այդ օրը տեղամասերում արգելվում է քարտարարները, արգելվում է նաեւ հեռուստատեսությամբ եւ ռադիոյով ընտրական տեսահոլովակների թողարկումը:

Մարզային ընտրական հանձնաժողովները հունիսի 26-ից ոչ ուշ հանրագումարում են սակրեբուլյոյի եւ քաղաքապետների, վարչության նախագահների ընտրության արդյունքները եւ հանրագումարային արձանագրությունները ներկայացնում ԿԸԳ-ին: Նորընտիր թեկնածուների իրավասությունների ժամկետը սկսվում է առավոտյան ժամը 8:00-ին եւ ավարտվում ժամը 20:00-ին: Դրանից հետո սկսվում է ձայների հաշվարկման ընթացակարգը: Այդ օրը տեղամասերում արգելվում է քարտարարները, արգելվում է նաեւ հեռուստատեսությամբ եւ ռադիոյով ընտրական տեսահոլովակների թողարկումը:

Մարզային ընտրական հանձնաժողովները հունիսի 26-ից ոչ ուշ հանրագումարում են սակրեբուլյոյի եւ քաղաքապետների, վարչության նախագահների ընտրության արդյունքները եւ հանրագումարային արձանագրությունները ներկայացնում ԿԸԳ-ին: Նորընտիր թեկնածուների իրավասությունների ժամկետը սկսվում է առավոտյան ժամը 8:00-ին եւ ավարտվում ժամը 20:00-ին: Դրանից հետո սկսվում է ձայների հաշվարկման ընթացակարգը: Այդ օրը տեղամասերում արգելվում է քարտարարները, արգելվում է նաեւ հեռուստատեսությամբ եւ ռադիոյով ընտրական տեսահոլովակների թողարկումը:

Թբիլիսիի քաղաքապետի եւ սակրեբուլյոյի ընտրությունների արդյունքները հանրագումարում է ԿԸԳ-ն, մինչեւ հունիսի 9-ը:

Այն դեպքում, եթե ընտրությունների օրը քաղաքապետների եւ վարչությունների նախագահների թեկնածուները չեն հավաքել ընտրողների 50 եւ ավելի տոկոսը, ԿԸԳ-ն նշանակում է ընտրությունների երկրորդ փուլը, որը կանցկացվի ընդունված որոշումից երկու շաբաթ անց: Անհրաժեշտության դեպքում, ընտրությունների երկրորդ փուլը կարող է անցկացվել նաեւ հունիսին:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ՇԱԿԱ ՓԻՓԻԱ «ՆԵՐԿԱ ԴՐՈՒԹՅԱՄԲ, ՍԱՄՑԻՆ-ՉԱՎԱԽԵԹԻՆ ԱՐՏՈՆՅԱԼ ԱԳՐՈՎԱՐԿԻ ՏԵՄՔՈՎ ՀԱՏԿԱՑԿԵԼ Է ՄՈՏ 10 ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻ»

ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅԻ ԻՐԱԿԱՆԱՅՎԵԼԻՔ ԵՎ ԿԱՐԳՆԵՐԸ ՍԱՄՑԻՆ-ՉԱՎԱԽԵԹԻՆ

Վրաստանի կառավարության նախաձեռնությամբ, գյուղատնտեսության նախարարությունը մշակել է «Արտոնյալ ագրովարկերի» նախագիծը, որը 2013 թվականի մարտի 27-ից իրականացնում է գյուղատնտեսական նախագծերի կառավարման գործակալությունը: Չեր ուշադրության ենք ներկայացնում գերատեսչության կողմից Սամցխե-Չավախեթի տարածաշրջանում իրականացվող եւ իրականացվելիք նախագծերի մասին Վրաստանի գյուղատնտեսության նախարար Շալվա Փիփիայի հետ հարցազրույցը:

- Բատոնո Շալվա, նախ մի քանի խոսք՝ «Արտոնյալ ագրովարկեր» նախագծի մասին:

- Ինչպես հավանաբար տեղեկացված եք, Վրաստանի կառավարությունը գյուղատնտեսությունը հռչակել է իրատեսական առաջնահերթություն: Գյուղմթերքների արտադրության, վերամշակման եւ պահպանման-իրացման պայմանների բարելավման նշանակալի լծակներից մեկը վերոնշյալ օղակները էժան եւ մատչելի դրամական միջոցներով ապահովումն է: Հենց այդ նպատակին է ծառայում «Արտոնյալ ագրովարկեր» նախագիծը: Գյուղատնտեսության կարիքների կարգավորմանն ուղղված վերոնշյալ նախագիծը ի սկզբանե կազմավորված է երեք բաղադրիչներից. 1.Սակավահող ֆերմերների համար առանց տոկոսի ապրանքային վարկ (ապառիկ), 2.Միջին եւ խոշոր ֆերմերների համար արտոնյալ ագրովարկեր, 3.Գյուղատնտեսական արտադրությունների համար արտոնյալ ագրովարկեր:

Մեկ տարվա ընթացքում ֆերմերների եւ արտադրողների պահանջներին ու կարիքներին համապատասխան, նախագիծը վերամշակվեց եւ ավելացվեց նոր բաղադրիչներով: Այն է՝ 4.Արտոնյալ ագրովարկ, 5.Խաղողի վերամշակման ընկերությունների համար արտոնյալ ագրովարկ, 6.Ցիտրուսների արտահանման եւ վերամշակման ընկերությունների համար արտոնյալ ագրովարկ, 7.Համապատասխան գրանցներով ֆինանսավորվող գյուղմթերքների վերամշակման արտադրությունների համար արտոնյալ ագրովարկ:

Նախագիծը, որի իրականացմանը ներգրավված է 13 բանկ, երկրորդ միկրոֆինանսական երկու կազմակերպությունն է լիզինգային երկու ընկերությունն արդեն մեկ տարի է, ինչ հաջողությամբ գործում է:

Ընդհանուր առմամբ, «Արտոնյալ ագրովարկ» նախագծի բոլոր յոթ բաղադրիչները ծառայում են գյուղատնտեսությանը էժան եւ մատչելի դրամական միջոցներով ապահովմանը:

- Կոնկրետ ի՞նչ աշխատանքներ են իրականացվել նախագծի շրջանակներում, մասնավորապես՝ Սամցխե-Չավախեթի տարածաշրջանում:

- Նախագծի շրջանակներում, Վրաստանի բոլոր տարածաշրջանների գյուղատնտեսության ավելի քան 30 ոլորտներին արդեն տրվել է 318 միլիոն լարիի 14100 արտոնյալ ագրովարկ: Նախագծի կիրարկման մեկ տարվա ընթացքում ֆինանսավորվել է 70 նոր արտադրության եւ 400-ից ավելի արդեն գործող արտադրության գործունեությունը:

Ինչ վերաբերում է Սամցխե-Չավախեթին, ապա, նախագծի երկրորդ բաղադրիչի շրջանակներում, տարածաշրջանի 613 վարկատուների տրվել է 7065400 լարի: Այդ տարածաշրջանի 20 վարկատուի երրորդ բաղադրիչի շրջանակներում փոխանցվել է 2497354 լարի: Նշենք, որ հիմնական ոլորտը, որտեղ նպատակաուղղվել են արտոնյալ վարկերը, անասնապահությունն է: Երրորդ բաղադրիչի շրջանակներում հիմնված 70 նոր արտադրությունից երկուսը գործում է Սամցխե-Չավախեթում: Դրանց ֆինանսավորման համար հատկացվել է 831868 լարի:

- Ի՞նչ կասե՞ք «Սակավահող ֆերմերների աջակցության» նախագծի մասին:

- Նախորդ տարվա նման, այս տարի էլ շարունակվում է «Սակավահող ֆերմերների» 2014 թվականի գարնանային աշխատանքների նախագիծը:

2014 թվականին վերոնշյալ նախագծի

համար հատկացվել է 90 միլիոն լարի:

Անցյալ տարվա շեղումներից խուսափելու նպատակով, մեծ աշխատանքներ են տարվում նախագծում ներգրավված մարդ-



կանց քանակի հստակեցման ուղղությամբ: Տեղական ինքնակառավարումների կողմից ցուցակների հստակեցումից հետո, 2014 թվականի գարնանային աշխատանքների աջակցության նպատակով, այս տարի շուրջ 800 հազար սակավահող ֆերմեր օգտվեցին այդ նախագծից:

- Սակայն, որքանով տեղեկացված ենք, բոլորը չէ, որ կարող են օգտվել այդ նախագիծը...

- Իրոք, այդպես է: «Սակավահող ֆերմերներին 2014 թվականի գարնանային աշխատանքների աջակցության նախագիծ» մասնակցում են այն ֆերմերները, ովքեր սեփականության ներքո ունեն կամ իրականում տնօրինում են 1,25 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողատարածք, եւ ովքեր աճեցնում են միսայն կամ բազմամյա մշակաբույսեր: «Լիբերթի» բանկը սկսել է պլաստիկ քարտերի բաժանումը: Ֆերմերներն այն կարող են ստանալ վեց ամսվա ընթացքում: Քարտերը դյուրացնում են ֆերմերների հարաբերությունները գյուղատնտեսական ապրանքների խանութների հետ: Նրանք այդ խանութներից կարող են գնել անհրաժեշտ ապրանքներ, պարարտանյութ, սերմանյութ, բույսերի պաշտպանության քիմիկատներ եւ այլն:

Ապրիլի 15-ի տվյալներով, նախագծից օգտվող 753136 ֆերմերին հատկացվել է 82194078 լարի:

Ինչ վերաբերում է նախագծի գործունեությանը Սամցխե-Չավախեթի տարածաշրջանում, ապա այստեղ, մեր հաշվարկներով, այդ օգնությունից կարող է օգտվել 44347 մարդ, որից 37070 արդեն ստացել է քարտը: Սամցխե-Չավախեթում ընդհանուր առմամբ ծրագրված է մշակել 30241 հեկտար հողատարածք, որից 651-ն արդեն մշակվել է: Նշենք, որ, անցյալ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատությամբ, մշակվել է 306 հեկտար հողատարածք:

Տարածաշրջանում գործում է գյուղատնտեսական 51 խանութ, որտեղ ֆերմերները կարող են օգտագործել իրենց ագրոքարտերը:

- Վերջին ժամանակներս բավականին սրվել է պարենի պիտանիության հիմնախնդիրը: Ի՞նչ է արվում այդ հարցի կարգավորման ուղղությամբ:

- Սկսած 2013 թվականից՝ գյուղատնտեսության նախարարության պարենի ազգային գործակալությունը կտրուկ խստացրել է պարենի պիտանիության պետական վերահսկողությունը: Մասնավորապես, նախորդ երեք տարվա համեմատությամբ, տեսչների թիվը եռապատկվել է, իսկ հանրային պատժամիջոցների քանակն ավելա-

ցել է 7 անգամ: 2013 թվականից կտրուկ աճել է երկրում եւ շուկաներում ժամկետանց ապրանքների իրացման կանխման փաստերը: Պարենի ազգային գործակալության կողմից Սամցխե-Չավախեթում անցկացվել են մի շարք միջոցառումներ: Պարբերական ստուգումներ են անցկացվում սպանդանոցներում, ձկնատնտեսություններում, սննդի օբյեկտներում:

- Սամցխե-Չավախեթին հիմնականում ապահովում է որպես անասնապահական տարածաշրջան, թեպետ այստեղ մեծ տեղ է հատկացվում նաեւ երկրագործությանը: Չեր գլխավորած նախարարությունն ի՞նչ օգնություն է ցուցաբերում տեղացիների վերոնշյալ ոլորտներում ծագող հիմնախնդիրների կարգավորման ուղղությամբ:

- Հավանաբար, խոսքը առաջին հերթին վերաբերում է անասունների պատվաստմանը: Նշենք, որ, անասունների հիվանդությունների կանխման նպատակով, տարածաշրջանում սմբակախոցի դեմ պատվաստվել է 47 հազար խոշոր եւ 14 հազար մանր եղջերավոր անասուն, ընդհանուր առմամբ՝ 203814 զլուխ անասուն: Պատվաստմանը զուգընթաց, հաշվարկման է վերցրել 5000 զլուխ անասուն: Տարածաշրջանում, ընդհանուր առմամբ, արդեն հաշվարկվել է 12724 զլուխ անասուն:

Սիբիրիայի դեմ պատվաստումներն սկսվեցին ապրիլի 14-ին, ընդհանուր առմամբ, պատվաստվելու է 19933 զլուխ անասուն: Ծրագրվում է նաեւ 13486 զլուխ անասունի պատվաստում՝ կատաղության դեմ: Անասունները կպատվաստվեն նաեւ բրյուցելոզի եւ տուբերկուլյոզի դեմ: Միջոցներ են ձեռնարկվում նաեւ մշակաբույսերի պաշտպանության ուղղությամբ: Մասնավորապես, Սամցխե-Չավախեթի տարածաշրջանի տնտեսական զարգացման նախագծով ծրագրվեց երկրամասում վնասատուների դեմ տեղադրել 600 հատ ֆերրոմանային թակարդ: Բույսերի պաշտպանության հանձնարարականներով տպագրվել է 3 հազար հատ վրացալեզու եւ ռուսալեզու բարձրագույն:

- Երկրագործության շրջանում գրավականներից մեկը ոռոգելի ջրի առկայությունն է: Հայտնի է, որ վերջին տասնամյակներում ոռոգման համակարգը երկրի մասշտաբով հեռու է բավարար լինելուց: Այդ առումով, բացառություն չէր նաեւ Սամցխե-Չավախեթին: Ի՞նչ է արվում այդ կենսական կարևոր հարցի կարգավորման ուղղությամբ:

- Գյուղատնտեսության նախարարությունը լայնամասշտաբ վերականգնողական աշխատանքներ է իրականացնում ոռոգման համակարգերի կարգավորման ուղղությամբ: Վրաստանի մասշտաբով, ոռոգման բոլոր խոշոր ջրանցքներն արդեն մաքրվել են ու կարգավորվել: Այսօրվա դրությամբ, մաքրվել եւ բարձր մակարդակով գործում է ոռոգման 1291,5 կիլոմետր երկարության մայրուղային ջրանցք:

Կոնկրետ Սամցխե-Չավախեթիում, 2013 թվականից կարգի է բերվել 10800 կիլոմետր ոռոգման ջրանցք, այդ թվում՝ կարգավորվել են Վալե-Պամաճ, Գուրկել-Ծրիոխի, Գուրկել-Զիկիլիա եւ Վերին ջրանցքները:

Այս տարի Սամցխե-Չավախեթիում ծրագրվում է կարգավորել 193779 կիլոմետր ոռոգման ջրանցք: Կարգավորվեն Զակի-Խանդ-Կոթելիա, Մուրջախեթի, Կատարջոյի եւ մյուս ոռոգման ինքնահոս համակարգերը:

Ավելացնեն նաեւ, որ Սամցխե-Չավախեթի տարածաշրջանում ակտիվ գործունեություն են ծավալել գյուղատնտեսության նախարարության տեղեկատվական-խորհրդատվական շրջանային ծառայությունները: Նշենք, որ, Վրաստանի մասշտաբով, 59 մուհիցիպալիտետում գործում է ավելի քան 260 բարձր որակավորման մասնագետ, որ խորհուրդներով ու հանձնարարականներով նշանակալի օգնություն են ցուցաբերում ֆերմերներին:

Հարցազրույցը վարեց Յուրի Պողոսյանը